



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Ս. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՍԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



ԿԼԵՆՏԵՅԼԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՅ ՄԷՋ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

ՄԱՍՆԱԿԻՑ ԵՂԷՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑՈՅ ՊԱՏԱՐԱԳԵՐՑ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ

ՊԱՏԳԱՄԵՅ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Տօնական մթնոլորտ կը տիրեր Կլենտեյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ շրջափակին մէջ, Կիրակի, 16 Հոկտեմբերի առաւօտուն: Երեց, մանուկ, երիտասարդ ու պատանի եկեղեցի փութացած էին, ողջունելու հայոց հայրապետը՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսը, որ պիտի գար Ս. Պատարագ մատուցելու եկեղեցւոյ մէջ, պատգամ տալու եւ օրհնութիւն բաշխելու հայ ժողովուրդին զաւակներուն:

Առաւօտեան ժամերգութիւնը սկսած էր. Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտներն ու արեւոյշները արդէն զոյգ շարք կազմած՝ պատուի կանգնած էին Վեհափառին սպասումով: Եկեղեցւոյ մուտքին, յատուկ տարազներ հագած՝ շարք բռնած էին նաեւ կիրակնօրեայի մատղաշ աշակերտները. շատեր առաջին անգամ ըլլալով պիտի տեսնէին Վեհափառ Հայրապետը...

Ժամը 10:30ին, Վեհափառ Հայրապետը եկեղեցի ժամանեց ընկերակցութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեանի եւ դիմաւորուեցաւ հոգեւոր հայրերու, Թեմիս ու եկեղեցւոյ ժողովականութեան ներկայացուցիչներու եւ ժողովուրդին կողմէ: Ներկայ էին Ասորի ուղղափառ եկեղեցւոյ Առաջնորդ Գերշ. Տ. Եուճին Զափլան Արեպիսկոպոս, Թեմիս նախկին Առաջնորդներէն Գերշ. Տ. Եփրեմ Արք. Թապագեան, Արեւմտեան Թեմի նախկին Առաջնորդ Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփան եւ այլ հոգեւորական ներկայացուցիչներ:

Կարճ ատեն ետք, Ս. Պատարագի համար զգեստաւորուած՝ Վեհափառ Հայրապետն ու Սրբազան Հայրերը ամփոփանիի տակ ուղղուեցան եկեղեցի, առաջնորդուելով դպրաց դասու անդամներուն կողմէ, անցնելով սկաուտական շարքերուն առջեւ: Աստիճաններուն մօտ, սպիտակ աղանիներ արձակուեցան, մինչ կիրակնօրեայ դպրոցի աշակերտները, մանկական անուշ ձայնով, կ'երգէին «Ի Վեհ Բարձանց»ը:

Թափօրը »Հրաշափառ«ով մուտք գործեց եկեղեցի. Վեհափառ Հայրապետն ու աղօթակից սրբազանները եւ միաբանները

առաջնորդուեցան Ս. Խորան, ուր սկիզբ առաւ Հայրապետական հանդիսաւոր Պատարագը: Ներկայ էին Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամներ՝ Տեարք Խաժակ Տիքիճեան եւ Վահէ Եագուպեան, Ազգ. Վարչութեան անդամներ, Զ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի, միութեանց ու կազմակերպութեանց ներկայացուցիչներ, բարերարներ ու խումներամ հայորդիներ: Եկեղեցւոյ ներսիդին ու նստարաններուն շուրջ բոլորը՝ տեղ գրաւած էին հազարաւոր հաւատացեալներ. հոգաբարձութիւնը յատուկ դասաւորում ըրած էր, որ եկեղեցիէն յորդող բազմութիւնը կարենայ եկեղեցւոյ ներքին սրահին մէջ, սպիտակ պաստառի վրայ հետեւիլ արարողութեան ու հայրապետական պատգամին:

Ս. Սեղանին սպասարկեցին Առաջնորդ Սրբազանը, Տ. Եփրեմ Արքեպիսկոպոս, իսկ խորանէն երգեցողութեան մասնակցեցան Միաբան Հայրեր: Եկեղեցւոյ երգչախումբը, տաղանդաւոր արուեստագետ Միքայէլ Աւետիսեանի խմբավարութեամբ, բազմաձայն երգեցողութեամբ ոգեղինացուց մթնոլորտը:

ՀԱՅՐԱՊԵՏԿԱՆ ՊԱՏԳԱՄ

Քարոզի պահէն առաջ խօսք առնելով, Առաջնորդ Սրբազանը ողջունեց հիւր հոգեւորականներն ու ներկայացուցչական դէմքերը. ան փառք տուաւ Աստուծոյ, որ մեր Թեմին շնորհեց Վեհափառ Հայրապետին հովուապետական չորրորդ այցելութիւնը վայելելու առիթը: Յիշեցուց՝ որ Նորին Ս. Օծութիւնը տասը օրէ ի վեր կը գտնուի մեզի հետ, վերանորոգելու հոգեւոր կեանքը, մղում տալու մեր ուսումնարաններուն ու ազգային իրաւունքներու հետապնդման. ան եղաւ մեր ժողովուրդի զաւակներուն հետ, եղաւ աշակերտներու, երիտասարդներու եւ երեցներու հետ, լսեց ու պատգամներ ուղղեց, եւ այսօր, հայրապետական Ս. Պատարագ մատուցելով՝ իր օրհնութիւններն ու պատգամը պիտի ուղղէ մեր ժողովուրդին: Առաջնորդ Սրբազանը հրաւիրեց Վեհափառը, որպէսզի ուղղէ իր պատգամը:

Վեհափառ Հայրապետը հայրական սիրով օրհնեց ներկաներն ու ողջունեց հիւր հոգեւորականները, ժողովուրդն ամբողջ: Ան յատկապէս ողջունեց Առաջնորդ Սրբազանը՝ որ նուիրումով լծուած է մեր եկեղեցւոյ ու ժողովուրդին ծառայութեան, օրհնեց Ազգային Վարչութիւնն ու յարակից մարմինները, կազմակերպութիւններն ու կառոյցները, որոնցմէ իւրաքանչիւրը, իր ճամբով, մասնակից է մեր ազգային կեանքի ծառայութեան:

Մեկնելով օրուան Աւետարանի հատուածէն, որ կը ներկայացնէր Յիսուսի Նազարէթ առաջին այցելութիւնը, Վեհափառ Հայրապետը նշեց, որ Աստուածորդին այդ առիթով ընթերցում մը կատարած էր Հին Կտակարանէն, ուր արձանագրուած էր թէ Աստուծոյ Հոգին Իր վրայ է, Ինք առաքուած է Ս. Հոգիէն, որպէսզի հիւանդներ բժշկէ, ճնշուածները ազատագրէ, Աստուծոյ խօսքը տարածէ եւ դէպի Աստուած ու փրկութիւն ճամբայ բանայ մարդկութեան համար: Զրիստոս աշխարհ առաքուած էր, որովհետեւ մարդն ու երկիրը հեռացած էին Աստուծմէ, մարդը կորսնցուցած էր աստուածատուր առաքինութիւնները: Զրիստոս ինքն է ճշմարտութեան

ու փրկութեան ճամբան, իսկ անոր աւանդը պահպանուած է եկեղեցւոյ կողմէ:

Խօսելով մեր պատմութեան ու եկեղեցւոյ դերին մասին, Վեհափառ Հայրապետը հաստատեց, թէ Զրիստոս ինքզինք Հայաստանի մէջ բացայայտեց Ս. Էջմիածինով, հաստատելով մեր եկեղեցին, որ այնուհետեւ դարեր շարունակ եւ մինչեւ օրս վկայութիւն է հայութեան ու Հայաստանի կեանքին մէջ Զրիստոսի ներթափանցումին եւ ներկայութեան: Մեր եկեղեցին եղաւ մեր հաւատքին, մշակոյթին ու ազգային կեանքի պահպանն ու կերտիչը, շարունակեց Վեհափառ Հայրապետը, ոգեկոչելով մեր Սրբազան Հայրերը, Լուսաւորիչէն մինչեւ Սահակ-Մեսրոպ, Նարեկացի ու Շնորհալի, նաեւ խաւարով պատուած միջնադարուն՝ լուսաւորող ճառագայթ: «Մեր եկեղեցին կերտեց մեր պատմութեան մեծագոյն նուաճումները, եղաւ Խրիմեան Հայրիկ ու Երկաթե Շերեփ, եղաւ Սարգարապատ ու Ղարաբաղ, ազատ, անկախ Հայաստան, որովհետեւ Զրիստոսի հաւատքով շաղախեց մեր ժողովուրդը, ապահովեց անոնց հաւատարմութիւնն ու Աստուծոյ ներկայութիւնը ժողովուրդի կեանքին մէջ», շեշտեց Վեհափառ Հայրապետը, աւելցնելով, որ եկեղեցւոյ ձայնը այսօր ալ կը շարունակուի Հայաստանէն մինչեւ Ղարաբաղ եւ սփիւռքեան օճախներ, հոն՝ ուր հայու շունչ կայ: Ան կոչ ուղղեց մեր ժողովուրդին՝ մասնակից ըլլալու եկեղեցւոյ կեանքին ու առաքելութեան, անոր լուսաւորող խորանին ճառագայթները ստանալով՝ ըլլալ զաւակները մեր եկեղեցւոյ, հետեւիլ ամբողջական փրկութեան առաջնորդող Զրիստոսի ուղիին:

Ս. Պատարագի աւարտին, երգչախումբը, ժողովուրդին ձայնակցութեամբ, երգեց «Կիլիկիա» եւ «Ի վեհ Բարձանց»ը, ապա, «Ուրախ Լեր»ով՝ հայրապետական թափօրը ուղղուեցաւ եկեղեցիէն դուրս, ներկաներուն ու մեր գաղութի զաւակներուն հոգիներուն մէջ դրոշմելով պատմական օր մը:

PONTIFICAL DIVINE LITURGY AT ST. MARY'S CHURCH

On the morning of Sunday, October 16, 2011, thousands of faithful of all ages had gathered at St. Mary's Church in Glendale for the Pontifical Divine Liturgy celebrated by His Holiness Catholicos Aram I, to receive the Pontiff's blessings and hear his inspiring message.

His Holiness, accompanied by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, arrived at St. Mary's Church where Homenetmen scouts had lined up in his honor along the path leading to the Church doors. Present to greet His Holiness were Clergy and Councils members, H.E. Archbishop Mor Clemis Eugene Kaplan, Prelate of the Syriac Orthodox Church, H.E. Archbishop Yeprem Tabakian, H.E. Archbishop Vatche Hovsepian, and representatives of sister organizations.

His Holiness and entourage were led to the Church doors where white doves were released as Sunday School students sang the Pontifical anthem.

With the singing of the "Hrashapar" hymn, His Holiness entered the Church and proceeded to the altar to begin the Divine Liturgy. The Prelate and Archbishop Tabakian assisted at the altar.

Before the Pontifical message, the Prelate greeted the faithful and thanked the Lord for granting the Prelacy this fourth Pontifical Visit of His Holiness. He reflected on the past ten days of the Pontifical Visit which has renewed us spiritually and given impetus to our schools and cause. He then invited His Holiness to deliver his message.

His Holiness conveyed his paternal blessings to all the faithful present and especially to the Prelate who is fully devoted in his service to our church and people, and to the Executive Council and members of sister organizations for their service towards the advancement of our community.

Citing from the day's Scripture reading, which was the Apostle Luke's account of our Lord Jesus Christ visiting His hometown of Nazareth, His Holiness noted a passage from the Old Testament which Jesus had read during His visit, "The spirit of the Lord is upon Me because He anointed Me to preach the Gospel to the poor, He has sent Me to proclaim release to the captives, and recovery of sight to the blind, to set free those who are downtrodden. To proclaim the favorable year of the Lord". Jesus Christ was sent because mankind and the world had separated themselves from God, man had lost his God-given virtues. Jesus Christ is the truth and the path to redemption, and these principles are upheld by our Church.

Speaking on our Church history and the role of the Armenian Church, His Holiness noted that Jesus Christ revealed Himself to Armenia through Etchmiadzin, established our Church, and centuries on remains engrained in the lives of the Armenian people. Our Church became that which built and preserved our faith, culture, and identity. The Church has had an invaluable role throughout our history, from Khrimian Hayrig to Sardarabad to Kharabakh to an independent Armenia and the voice of our Church today echoes loudly from Armenia to Kharabakh to the Diaspora, breathing life into all. His Holiness urged the faithful to be active participants in the life of our Church, to become children of our Church, and to follow the righteous path of Jesus Christ which leads to salvation.

The Cilician and Pontifical anthems were sung at the conclusion of the Liturgy, and His Holiness was then led from the altar with the singing of the "Oorakh Ler" hymn.